

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԱԿՆԱՐԿԸ Կ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻ ՍՏԵՂԵԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ԼԵՆԱ ՉԱԿՈՐՅԱՆ

Գեղարվեստական ակնարկի առանձնահատկությունների, ժանրի զարգացման կարևորության մասին թե՛ քսանական թվականներին և թե՛ հետագա տասնամյակներին մեզանում գրվել են արժեքավոր հոդվածներ, արվել հետաքրքիր դիտողություններ և հետևություններ: Այս ժանրի զարգացման հրատապ հարցերը քննության են առնվել սովետահայ գրականության խնդիրների հետ սերտորեն առնչված: Դերենիկ Դեմիրճյանն, օրինակ, բնութագրելով պատմվածքի և գեղարվեստական ակնարկի հատկանշական գծերը, համոզիչ կերպով ցույց է տալիս դրանց տարբերիչ կողմերն ու համանման հատկանիշները: Գեղարվեստական պահանջների տեսակետից նա որևէ զիջում չի անում ակնարկագիրներին: Ականավոր ռեալիստ-արձակագիրը այդ ժանրի զարգացման խնդիրը կապում է գրական վարպետության, նոր իրականության խոր ճանաչողության հետ: Նկատի ունենալով պատմվածքն ու գեղարվեստական ակնարկը, նա գտնում էր, որ գործ ունենք երկու տեսակ իրականության հետ, առաջինը՝ փաստական, երկրորդը՝ հորինված: Դ. Դեմիրճյանը հատկապես շեշտում է, որ «սրանց առնչությունները շատ սերտ են»: Ակնարկը փաստորեն գեղարվեստականացնում է, պատմվածքային ձևեր է բանեցնում միայն այն նպատակով, որ ուժեղացնի փաստի տպավորությունը: Սակայն ակնարկագիրը չի կարող անվերջ ուժեղացնելու համար փոփոխել փաստերը: Իսկ պատմվածք գրողը, որ կարող է փաստերն անվերջ փոփոխել, ավելացնել, խտացնել, խորացնել հորինելով, նաև ևս ուզում է իր երկում թողնել իրական փաստի տպավորություն¹:

Դեմիրճյանը գտնում էր, որ գրողը պետք է կարողանա տարբերել իրականության փաստերի էմպիրիկ շարադրումը վիպական իմաստավորված, նպատակալաց և խոր ընդհանրացումներ կատարելու եղանակից: Գրական երկը հաջողություն չի ունենա և բուն նպատակին չի հասնի, եթե այդ իրականությունը չի իմաստավորված արտաքին երևույթի հետ ունեցած իր ներքին էությունը:

Սովետահայ գրականության մեջ գեղարվեստական ակնարկի լավագույն օրինակ է Կարեն Միքայելյանի «Magestic» («Մաթեստիկ») ակնարկաշարը: Հեղինակը լինելով բազմակողմանի զարգացած, լայն մտահորիզոնի տեր անհատականություն, հասարակական գործիչ, արձակագիր և դրամատուրգ, բանաստեղծ ու թարգմանիչ, միևնույն ժամանակ շնորհալի ակնարկագիր էր:

1925—1927 թթ. Կ. Միքայելյանը որպես Կարմիր խաչի և Հայաստանի օգնության կոմիտեի (ՀՕԿ) պատվիրակության անդամ մեկնում է Եվրոպա, ապա Ամերիկա և մոտիկից ծանոթանում գաղութահայ կյանքին: «Մաթեստիկը» գրված է այդ ուղևորության անմիջական ազդեցությամբ: Ակնարկաշարը

¹ Դ. Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հ. 8, Երևան, 1963, էջ 492: (Ընդգծումները հեղինակինն են):

առաջին անգամ առանձին զբոլով լույս տեսավ 1928 թ.², այնուհետև այն գետեղվեց հեղինակի «Կեցցեն հաղթվածները» ժողովածուում: Ակնարկաշարն իր մեջ ամփոփում է տասներեք ակնարկներ («Magestic», «Մեր գաղտնիքը», «Ռուսաստանի սիրահարը», «Առեղծվածը», «Անմխիթար սերը», «Ինտերնացիոնալիստը» և այլն), որոնց մի մասի վերլուծությունն իսկ բավական է ցույց տալու համար, թե սոցիալ-քաղաքական ինչպիսի հրատապ հարցեր են մտա-տանջել հեղինակին:

«Մաժեստիկը» իր կենսական հարուստ բովանդակությամբ, սյուժետային կառուցվածքով և ռեալիստական արտահայտչականությամբ սովետահայ գեղարվեստական ակնարկագրության նվաճումներից է: Հեղինակը ստեղծել է մի այնպիսի մեծարժեք գեղարվեստական ակնարկ, որը լիովին բավարարում է գրական այդ տեսակի պահանջները, նշանակալից է գաղափարական նպատակասլացությամբ, հոգեբանական ինքնատիպ վերլուծություններով, դեպքերի ու մարդկանց վերաբերմունքի բացահայտման խոր համոզականությամբ: Ավելին, օժտված լինելով դասական ակնարկին հատուկ գեղարվեստական արժանիքներով, «Մաժեստիկը» իր մեջ բովանդակում է շփազանց գրավիչ մի նովել («Առեղծվածը»), որն աչքի է ընկնում նաև նովելային անսպասելի ավարտով: Այսպիսով, Կ. Միքայելյանի ակնարկաշարն իր մեջ միաձուլում է թե՛ նովելի և թե՛ ակնարկի արտահայտչական հնարանները:

«Մաժեստիկ» ակնարկաշարի ուշագրավ դարձվածքները և նկարագրական երանգները դրսևորում են գրողի ճշմարտացի մոտեցումը կյանքի երևույթներին, պատկերման ռեալիստական ուժն ու յուրահատուկ մթնոլորտի, միջավայրի զգացողությունը: Հեղինակը խուսափել է սոսկ մակերեսային նկարագրություններից, նա կարողացել է իրական գույներով ներկայացնել առանձնահատուկ բարդ միջավայր, մարդկային փոխհարաբերություններն ու հոգեբանությունը, նրանց վարվելակերպը և կենսահայեցողությունը: Այս առավելություններին ոչետք է ավելացնել նաև ակնարկաշարում հեղինակի հրապարակախոսական ձիրքն ու յուրահատուկ դատողությունը: Նրա հրապարակախոսական խոսքը երևան է գալիս պատկերավոր և սեղմ արտահայտչաձևերով, կրթով ու հուզական երանգավորումով, իսկ դատողություններն արտահայտում են նրա համոզմունքները՝ առանց որևէ արտաքին գունազարդումների:

Ռեալիստական նկարագրությամբ և ինքնատիպ հնչողությամբ աչքի է ընկնում «Մաժեստիկ» նավի պատկերումը, որի մասին ամբողջական պատկերացում կազմելու համար հեղինակը հաղորդում է նաև փաստական անհրաժեշտ տվյալներ: Մասնավորապես նշվում է, որ «Մաժեստիկը» աշխարհի խոշորագույն նավերից մեկն է՝ երեք միլիոն վեց հարյուր հազար փութ տարողությամբ, պատերազմից առաջ այն պատկանել է Գերմանիային, իսկ նկարագրվող ժամանակաշրջանում նրա կայմի վրա ծածանվում էր բրիտանական դրոշակ. «Առաջին անգամ, երբ մտա մեջը,— գրում է Կ. Միքայելյանը,— մի րոպե մոռացա, որ գտնվում եմ նավում: Թվաց, թե դա մի մեծ, եվրոպական հոթել է՝ բազմահարկ ու աղմկահույզ, լիֆտերի տենդային վեր ու վարով... Առաջին անգամն էի տեսնում և առաջին անգամ այդ վիթխարի նավով Ամերիկա պիտի գնայի:

Ֆրանսիական ցամաքից նրան մոտեցանք երկու խոշոր նավերով:

2 4. Միքայելյան, Magestic, Սոսկվա, 1928:

Նա եկել, խարիսխ էր ձգել հեռու օվկիանոսից, իբրև մի ամենի հրեշ: Նա այնքան մեծ էր, որ նավահանգստի խորշը չէր կարողանում տեղավորել իր ջրերի մեջ»³:

Նավի մասին ամբողջական գաղափար տալուց հետո, հեղինակն անցնում է մարդկանց վարքագծի ու հոգեբանության վերարտադրությանը: Խտացված ձևով ներկայացվում են բուրժուական աշխարհի, արտասահմանյան կյանքի հատկանշական կողմերը՝ թե՛ հասարակական-քաղաքական տեսակետից և թե՛ մարդկային փոխհարաբերությունների ու բարքերի առումով: Խուսափելով վերացական, սխեմատիկ դատողություններից՝ Կ. Միքայելյանը վերարտադրում է անմիջական մարդկային փոխհարաբերությունները, կյանքի բուն ճշմարտությունը: Իսկ այդ անելու համար նա չի դիմում ժավալուն նկարագրությունների, այլ շոշափում է մի քանի բնորոշ փաստեր, որևէ հատկանշական երեվույթ, որոնց միջոցով ոչ միայն հետաքրքրական կերպար է ստեղծում, այլև որոշակի ճշմարիտ պատկերացում է տալիս ժամանակի բարքերի, հասարակական տրամադրությունների մասին:

Առաջին իսկ հանդիպումը անգլիացի պաշտոնյայի հետ նավի ութերորդ հարկի սեղանատանը ինքնին բնութագրական է և բացահայտում է հիմնական հակադրությունը, որով յուրովի երևան է բերվում ժամանակի բարքերին հատկանշական մի բնորոշ գիծ: Հանդիպման սեղմ նկարագրությունը ելակետ է ծառայում ամբողջ ակնարկի սյուժեի զարգացման համար: Մինչ բուն նյութին անցնելը, ակնարկագիրն արտահայտիչ պատկերներով ու գեղարվեստական կենդանի փոխհարաբերություններով վերարտադրում է նավում տիրող շռայլ ցուփությունը, որը, սակայն, բոլորին մատչելի չէ: Այդ հատվածում էականը նավի ուղևորների դասակարգային շերտավորումն է: Մանավանդ բնորոշ է այն պահը, երբ սովետական քաղաքացին, ներկայացնելով իր կտրոնը, փորձում է նստել այն սեղաններից մեկի մոտ, ուր բազմել են ջենտլմենները: Անթերի հագնված սպասավորը նրան սառը ցույց է տալիս իր տեղը⁴:

Հետագա էպիզոդներում ևս Կ. Միքայելյանը հանդես է գալիս որպես գեղարվեստական ակնարկի փորձառու վարպետ, որը շարունակ իրական տպավորություններ է վերարտադրում, իմաստավորում է եղելությունները, հանդիպումները, հակասությունները, ամբողջ այդ հսկայական նավի միջավայրը և բազմազան կերպարները: Մի խոսքով, մթնոլորտը ներկայացվում է ընթերցողին իր ռեալիստական կոնկրետության մեջ: Ստեղծագործական բավականաչափ բարդ խնդիրները ակնարկագիրը լուծում է առանց նեղ պայմանականությունների կամ գունազարդումների, միանգամայն սեղմ արտահայտչական միջոցներով: Խորապես համոզիչ են «Մեր գաղտնիքը» ենթավերնագիրը կրող փոքրիկ պատկերում բնութագրվող կերպարի յուրահատուկ վարքագծի, հոգեբանության հատկանշական կողմերի դրսևորումները: Նրա և սովետական քաղաքացու՝ ներկա դեպքում հեղինակի հանդիպումը, վերջինիս արտահայտիչ ռեպլիկները խտացնում են ժամանակի բնորոշ տրամադրությունը: Պատկերն աչքի է ընկնում իրական գույներով, երևույթների, գործող անձնավորությունների վարքագծի անհատականացմամբ: Դրա շնորհիվ արձակագիրը կա-

³ Կ. Միքայելյան, Կեցքեն հաղթվածները, Երևան, 1961 (այսուհետև օգտվել ենք սույն հրատարակությունից—Լ. Հ.):

⁴ Նույն տեղում, էջ 167:

րողանում է հասնել հասարակական սոցիալական նշանակություն ունեցող երևույթների սեղմ ընդհանրացման, կենսական խոր ճշմարտության:

Հարկ է նշել նաև արտահայտչական ձևերի պարզությունը: Կ. Միքայելյանը ընդգծում է հարց ու պատասխանի ներքին քաղաքական իմաստը, սովետական քաղաքացու բարոյական բարձր արժանապատվությունը: Նա հրմտորեն զուգակցում է նկարագրական և երկխոսության հնարանքները և հասնում բնութագրության ամբողջականության: Սկզբնական հատվածներում տրված է ազգության մը սլավոն և կոտորված անգլերենով խոսող մետաղագործի ուշադրությունը սովետական քաղաքացու նկատմամբ: Հեղինակը նշում է, թե ինչպես նա անհամարձակ մոտենում է սովետական քաղաքացուն և հետաքրքրվում Ռուսաստանի վիճակով: Նա անպաճույճ բացատրում է, որ իրենց երկրում միայն բուրժուական թերթեր են լույս տեսնում, որոնք ինչեր ասես, որ չեն գրում Սովետների մասին, իսկ ինքը շատ է ցանկանում իմանալ ճշմարտությունը: Նրա այն հարցին՝ արդյոք լավ է այնտեղ, թե՞ վատ, սովետական քաղաքացին պատասխանում է դիպուկ և բովանդակալից. «Աղքատների համար լավ է, իսկ հարուստների համար՝ վատ»⁵: Բանվոր սլավոնը լիովին բավարարվում է այդ պատասխանով, իսկ այնուհետև հանդիպելիս, նա մտերմիկ ժպտում է, կարծես հասկացնելով, թե իրենց մեջ մի կարևոր գաղտնիք կա, որի մասին ոչ ոք ոչինչ չգիտե:

Հաջորդ կերպարը, որը նույնպես հետաքրքրվում է Ռուսաստանով, սակայն բոլորովին այլ նկատառումներով, մի հարուստ հրեա է («Ռուսաստանի սիրահարը»): Նրան Ռուսաստանը հետաքրքրում է միայն հարստանալու առումով: Առաջին հայացքից թվում է, թե նա գիտնական է, որովհետև միշտ ձեռքին հնագիտական գիրք կա: Սակայն նրա արտաքինը և մանավանդ մատի ադամանդե մատանին գիտնականի տպավորություն չեն թողնում:

Ակնարկում առկա են այլ հետաքրքրական դիտումներ ու պահեր, որոնք նպաստում են այդ մարդու հոգեբանությունն ու վարքագիծը բացահայտելուն: Տպավորիչ երկխոսությունը լիովին մերկացնում է նրա Ռուսաստանով հետաքրքրվելու բուն շարժառիթները, և նա ընթերցողին ներկայանում է որպես մի փորձառու առևտրական, որն անմիջապես գնահատում է իրադրությունը՝ առավել հարստանալու համար:

Վերջինիս կարծիքով՝ Ռուսաստանն առայժմ ամենահետաքրքիր երկիրն է, որովհետև նա չի ուզում փոխհարաբերության մեջ մտնել դրսի աշխարհի հետ: Եվ հենց դրա համար էլ, ինչ գնով ուզում է լինի, նա ձգտում է ընկնել այնտեղ՝ գրպանում ունենալով մեկ միլիոն դոլլար, որպեսզի այն դարձնի չորս միլիոն: Արձակագիրը ռեալիստական ուժով պատկերում է հոգեբանական ուշադրավ պահեր, որոնց միջոցով ընդգծվում են այդ շահամոլի ապրումները, բնավորության բնորոշ կողմերը: Հետագա երկխոսություններն էլ սլավելի են բացահայտում նրա վարքագիծը և իսկական նպատակները: Այդ կերպ հրեա վաճառականի կերպարը ստանում է հոգեբանական ամբողջական մարմնավորում: Նա հայտարարում է, որ հեղափոխությունից հետո հարուստներից բռնագրավված իրերը կարելի է էժան գներով ձեռք բերել Ռուսաստանում և ապա թանկ վերավաճառել: Այն հարցին, թե ի՞նչ կցանկանար նա ձեռք բերել, ամերիկացի բիզնեսմենը պատասխանում է. «Այն, ինչ հեղափոխությունների

⁵ Նույն տեղում, էջ 169:

ժամանակ չի դնահատվում. գործելներ, ֆարֆորներ, մսդալիոներ, հնավանդ իրեր, և, առհասարակ, շռայլության պարագաներ: Գիտեք, մենք ամերիկացիներ ենք, հոտառություն ունենք, ամեն մի կացության մեջ կարողանում ենք գտնել շահի աղբյուրը: Կարո՞ղ եք երևակայել, թե ինչ ահռելի հարստություն կարելի է վաստակել, եթե մարդ այդ ապրանքներից մեկ միլիոն դոլարի գնի և բերի Ամերիկա»⁶:

Բիդնեսմենին յուրահատուկ ապրումների ռեալիստական մարմնավորման ընթացքում հեղինակը հետևողականորեն ի հայտ է բերում նաև իր անմիջական վերաբերմունքը, բնութագրական գնահատականներն ու ապրումները, որի շնորհիվ ընթերցողն ամբողջական գաղափար է կազմում սովետական գրողի և քաղաքացու հոգեբանության, տրամադրությունների ու կենսահայեցողության մասին:

Քնարական, բանաստեղծական արձակի լավագույն նմուշ է «Մինչև վերջն էլ մնաց ինձ համար առեղծված» տողերով սկսվող ռոմանտիկ սիրային նովելը, որը նշանակալից է մարդկային խոր զգացմունքներով, իսկական հուզականություններ և կառուցվածքի ինքնատիպությամբ: Այդ նյութը հեղինակը կարող էր ներկայացնել իբրև առանձին նովել, սակայն այն ստեղծագործորեն օրգանապես ներծուլել է ընդարձակ ակնարկի գաղափարական բովանդակությանը և հասել տրամաբանական ներդաշնակության: Ընթերցողին գրավում են քննադատաբար ստեղծված պատկերները, որոնք գրված են ներքին խոր ներշնչանքով և հուզական անմիջականությամբ: Տպավորիչ են մանավանդ աղջկա գեղեցկության, նրա արտասովոր հմայքի կենդանի պատկերումները և առհասարակ բանաստեղծական ռոմանտիկ գույները: Կ. Միքայելյանը նկարագրում է երկու զույգերի, որոնց անխաղախ ու նվիրական սիրով հիանում է նավի ողջ անձնակազմը: Աղջիկը հազիվ քսանմեկ տարեկան, մի չնաշխարհիկ ամերիկուհի է՝ ոսկեգանգուր մազերով, բարեձև, սլացիկ սրունքներով: Իսկ տղան, նույնպես չափազանց հմայիչ մի անձնավորություն, սովորի պես անընդհատ հետևում է աղջկան: Կենդանի շնչով են տրված նավի և բնության նկարագրությունները: Երբ օվկիանոսը խաղաղ է, նավը ծանր օրորոցի նման սահում է ջրերի կապույտ հայելու վրա, իսկ նրա երկու կողմերում փռված կնճիռների երերուն շղարշները թիթեռնիկի թևերի պես տարածվում են ջրերի երեսին ու հալվում հեռու մշուշում: Եվ այդ ֆոնի վրա նկարագրվում են գեղեցիկ զույգի սիրային քնքուշ զեղումները:

Հեղինակն այստեղ ևս ինքնատիպ համեմատություններով ու մակդիրներով հասնում է քնարական ապրումների ու պատկերումների բանաստեղծական հաստատման, որի հետ մեկտեղ նա հանդես է բերել նաև գեղարվեստական չափի մեծ զգացողություն. «Եվ դիտում էր նրանց ամբողջ նավը, հիանում նրանց նվիրական, անխաղախ սիրո վրա, որ ավելի անբիծ էր, քան սառնամանիքին երկնքից իջնող ձյունի փաթիլը, ավելի մաքուր, քան արշալույսին բացվող նռնենու ծաղիկը»⁷:

Նովելային այս պատկերում յուրօրինակ հետաքրքրություն են ներկայացնում պոետիկ վշտի անմիջական դրսևորումները, որոնք ունեն առանձնահատուկ երանգավորում:

⁶ Նույն տեղում, էջ 171:

⁷ Նույն տեղում, էջ 173:

Սակայն որքան խորն են լինում հեղինակի զարմանքն ու հիասթափությունը, երբ նա իմանում է, որ այդ զույգը նավային ընկերության կողմից վարձված դերասաններ են, որոնց հանձնարարված էր ողջ շաբաթ ճանապարհորդների համար սիրահարների դեր խաղալ: Դիպուկ է հնչում նրա խոսակցի դիտողությունն այս առթիվ. «Եթե գործնական այս դարում շոալություն է քեզ համար այդ սերը, ապա թող ուրիշները սիրեն, և դու գոհ եղիր, որ ձրի հանդիսատեսի արտոնությունն ունես»⁸:

Գրողը չի ուզում հավատալ, որ դա իսկապես խաղ էր, և այդ զույգը նրա համար մինչև վերջ էլ մնում է առեղծված:

«Մաժեստիկ» ակնարկաշարի որ հատվածն էլ վերցնելու լինենք, անմիջապես զգացվում է պատկերման խոր ճշմարտացիություն և ոճի պարզություն: Այստեղ առհասարակ առկա են գեղարվեստական ակնարկի ժանրային բոլոր հատկանիշները: Դրանցից է պատկերման բնույթի որոշ հատվածայնությունը, որ իր մեջ ներփակում է գործողությունների փոքր ու որոշակի ժամանակահատված⁹: Դրան պետք է ավելացնել, որ «Մաժեստիկը» պարունակում է նաև ուղեգրություններին հատուկ որոշակի հատկանիշներ:

Վերը նշված արժանիքները և գեղարվեստական եղանակները «Մաժեստիկ» ակնարկաշարի հետագա բոլոր էպիզոդներում արտահայտվում են լիակատար չափով: Թեև ամեն մի էպիզոդ պահպանում է ակնարկային ժանրին հատուկ հատվածայնությունը, այնուամենայնիվ, հեղինակին հաջողվել է վերարտադրել ամերիկահայ գաղութի կյանքի մի շարք տիպական երևույթներ և մարմնավորել մարդկանց մտածելակերպի, տրամադրությունների ու կենցաղավարության բնորոշ կողմերը: Արձակագիրը մասնավոր փաստերից ու կենցաղային երանգներից կարողացել է վեր բարձրանալ և կատարել աչքի ընկնող ընդհանրացումներ, շոշափել սոցիալ-հասարակական խնդիրներ:

Ռեալիստական ճշմարտացիությամբ են վերարտադրված, օրինակ, մեծ քաղաքի արվարձաններից մեկի՝ արհեստական մետաքսի գործարանին կից ապրող հայկական փոքրիկ գաղութի կյանքի, մարդկանց փոխհարաբերությունների ու անկատարների տիպական կողմերը («Անմխիթար սեր»): Այստեղ առկա են հոգեբանական առանձին պահեր, որոնք նպաստում են բացահայտելու այն առանձնահատուկն ու էականը, որ հատկանշական է օտարության մեջ գտնվող հայերին:

Կ. Միքայելյանի ստեղծագործական հաջողությունը պետք է համարել «ինտերնացիոնալիստի» («ինտերնացիոնալիստը») ամբողջական և ցայտուն կերպարի խորապես ճշմարտացի մարմնավորումը: Հայկական առաջին կոտորածի ժամանակ, պատանի հասակում, նրա աչքի առաջ մորթում են հորը, թալանում տունն ու խանութը: Նա հայրենի քաղաքից փախչում է արտասահման՝ վաճառական հորեղբոր մոտ և վարում է վերջինիս առևտրական գործերը, իսկ հորեղբոր մահից հետո, տիրանում նրա հարստությանը: Ակնարկում քայլ առ քայլ բացահայտվում են նրա բնավորության բնորոշ գծերը, վերարտադրվում նրա ամբողջ կենսափիլիսոփայությունը: Հատկապես շեշտվում է այն հանգամանքը, որ նա բոլորովին չէր զբաղվում հասարակական-քաղաքական գործերով, որովհետև, ինչպես հորեղբայրն էր ասում. «Անոնք

⁸ Նույն տեղում, էջ 179:

⁹ Վ. Մկրտչյան, Գրողը աշխարհի արձագանքն է, Երևան, 1968, էջ 248:

աղղի տունը քանգեցին»։ Նա հանգանակութիւններին մասնակցում էր միայն այն ժամանակ, երբ Հայաստանում կոտորած էր լինում, և դրամ վճարում էր հոր հիշատակի համար, իբր մեռելոցի «գանձանակ»։ Իսկ մնացած դեպքերում, ինչ նպատակի համար էլ որ լինե՞ր հանգանակութիւնը, նա չէր մասնակցում։ «Աղղար, մոռացե՛ք իմ հայ ըլլալս։ Ես ազգութիւն չեմ անշնար։ Ես միջազգային եմ...»¹⁰։

Սակայն ակնարկում շեշտվում է նրա կենդանի հետաքրքրութիւնը հորհրդաւին Հայաստանի նկատմամբ։ Նա գոհ է, որ այնտեղ կոտորած, սով, հիվանդութիւններ չկան, իրենք իրենց խորհրդով կառավարում են երկիրը, առանց կռիւի, առանց արյուն ու կոտորածի։ «Եվ իրավամբ էլ անունը դրած են «Խորհրդով Հայաստան»»¹¹։

Սա, իհարկե, իսկական ինտերնացիոնալիստ չէ, և այդ պատճառով էլ հեղինակը ինտերնացիոնալիստ բառը վերցնում է չակերտների մեջ։ Մյուս կողմից, թեև նա դեմ չէ Սովետական Հայաստանին, բայց ոչինչ չի ուզում զոհաբերել ո՛չ նոր հայրենիքի, և ո՛չ էլ հայ ժողովրդի շահերին։

«Մածեստիկ» ակնարկաշարում ուշադրութեան արժանի են նաև բարոյա-էթիկական հարցեր շոշափող հատվածները և ամերիկյան ցոփ կենցաղավարութեան բնորոշ կողմերն արտահայտող պատկերները, ուր սուր քննադատութեան է ենթարկվում Ամերիկայի ազգերի ձուլման քաղաքականութիւնը («Allweis»), նշվում, որ հայ երիտասարդ աղջիկներից ու տղաներից շատերը բոլորովին չգիտեն իրենց մայրենի լեզուն։ Այդ կապակցությամբ հետաքրքրական են տանտիրոջ խորհրդածութիւնները. «Դժվար է, աղպարս,— շարունակեց տանտերը,— շատ դժվար հոս ծնածին իբրև հայ կոչել։ Գիտե՞ք ինչ ձուլարան է սա Ամերիկան, հրեշի պես կկլանե՛ն ազգութիւնները... Ասոնց երեք քառորդը հայերեն բառ մը չի կրնար արտասանել... Այո, ինչ որ Աբդուլ Համիդն ու Ջարերը չկրցան ընել հալածանքով ու կոտորածով, ասոնք կընեն առանց բանտի ու կաթիլ արյան...»¹²։

Ինչպես ամբողջ ակնարկաշարում, այս հատվածում ևս ամերիկահայ գաղութի իրական վիճակը նկարագրելիս Կ. Միջայեւյանը նկարագրում է դրամատիկ պահեր, սակայն, նրան խորթ չեն նաև հումորն ու սատիրան։ Այս առումով ուշագրավ է բուրժուական քաղքենիական բարքերի քննադատութիւնը և դեռևս այդ բարքերից զերծ մնացած առանձին անհատների պատկերումը, որոնք նոր էին եկել «Երկրեն»։ Հեղինակը յուրովի է ներկայացնում տանտիրոջ սգավոր քրոջ ծանր, ահաւոր ողբերգութիւնը։ Նա «այնտեղ» ունեւր տուն, ամուսին, երկու աղջիկ... Պատերազմի ծանր օրերին կորցնում է ամեն ինչ և երկու դեռատի աղջիկների հետ փախչում Ամերիկա, որտեղի բարքերը նրան խորթ են ու անսովոր։ Նրա պարզ և ժողովրդական առողջ մտածողութիւնը ակնարկագիրը հակադրում է տիրող բուրժուական բարոյականութեանը։ Սկզբից ևեթ նա ատում է շրջապատի մարդկանց, նրանց դեմքերի ժպիտը, որովհետև նրան թվում է, թե այդ ժպիտը գողացված է իր նմաններից։ Տխուր և դժգոհ են նաև նրա աղջիկները։ Նրանց դժգոհութեան պատճառը մայրն ու նրա համառութիւնն է, որը չի ուզում հաշտվել ամերիկյան կենցաղի հետ։

¹⁰ Նույն տեղում, էջ 179։

¹¹ Նույն տեղում։

¹² Նույն տեղում, էջ 183։

«Մաժեստիկ» ակնարկաշարի հաջորդ էպիզոդները նույնպես շոշափում են կարևոր հարցեր: Նախորդ ակնարկների գեղարվեստական պատկերներն ու առանձնահատկությունները համապատասխան արտահայտություն են ստանում նաև «Ըսեք գրաբարը շմոռնան», «Խաղաղականի ասիերին», «Լուսարարը» և այլ գործերում, որոնց մեջ կրկին զգացվում է հեղինակի պատկերման հմտությունը, ռեալիստական բացահայտման ուժը և սովետական գրողի քաղաքացիական ձիշտ դիրքորոշումը:

Ինքնին շատ հետաքրքրական է «Ըսեք գրաբարը շմոռնան» պատկերը, որը հագեցված է աշխույժ հումորով: Հեղինակը ներկայացնում է երեք տարբեր անհատականությունների, որոնք ապրում են աշխարհի տարբեր ծայրերում: Նրանք միմյանց հետ ծանոթ չեն, սակայն երեքն էլ կապված են իրար հետ պաշտամունքի մի առարկայով՝ գրաբար լեզվով: Երեքն էլ համառ, կույր երկրպագուներ են՝ «ֆանատիկոս, անհամբերատար և անհաշտ»:

Ավելի ամբողջական է ներկայացված գրաբարի երկրպագուի մտածելակերպը և հոգեբանությունը: Պատկերը լիակատար դարձնելու համար հեղինակն ուշադիր նկարագրում է նրա կենցաղը. «Նրա կահկարասին մի դաշինք էր ալեւոր արևելքի և ժամանակակից արևմուտքի միջև»¹³: Այս երկու տողը և հետագա բնութագրական ու տպավորիչ գեղարվեստական վրձնումները նպաստում են Զառե Զեյմսի՝ Կարապետ Հակոբյանի, տիպական բնավորության ռեալիստական մարմնավորմանը: Այդ նպատակին են ծառայում մարդահասակ ծաղկամանների, Խորասանից բերված թանկարժեք գորգերի, շինական փայտից շինած աթոռների, փղոսկրյա հազվագյուտ ջահի և նրա յուրահատուկ մատենադարանում դասավորված փառակազմ ոսկետառ գրքերի բնութագրումները, որոնք յուրահատուկ բանալի են այդ տիպի բացահայտման համար: Սակայն առավել շեշտված են հանդես գալիս նրա բնավորության ու մտածողության գծերը հեղինակի հետ ունեցած երկխոսության ընթացքում: Ակնարկագիրը, ձիշտ է, լայն տեղ չի հատկացնում գրաբարի այդ երկրպագուի բնութագրմանը, սակայն, այնուամենայնիվ, հակիրճ նկարագրությամբ կարողանում է վերարտադրել նրա ուրույն մտածողությունը և անհանգստությունը գրաբարի ձևկատարգրի հանդեպ:

Երրորդի՝ Վշտունու ուշքն ու միտքը ամբողջապես ուղղված է այն միջոցների հորինմանը, որոնցով հնարավոր կլինի փրկել գրաբարը: Հասարակ մահկանացու չէ նա, այլ գիտնական-քիմիկոս, որը գյուտ է արել, ստացել խոշոր գումար, աշխատում է նոր գյուտի վրա, որպեսզի ստացված միջոցները ներդնի գրաբարի փրկության գործին: Վշտունու կերպարը, նրա մտածողությունն ու վարմունքը տրված են կենդանի և իրական գույներով: Նրա առանձնահատուկ ապրումները, ներաշխարհը բացահայտվում են խորաթափանց կերպով: Այդ ամենը հեղինակը տալիս է նուրբ հումորի երանգներով, որ նույնպես ի սպաս են դրված չափազանց հետաքրքրական այդ կերպարների բնորոշ գծերի գեղարվեստական վերարտադրությանը:

Հույժ ուշագրավ է «Միսիսիպի գետի պղտոր ջրերը» ակնարկը, որտեղ գեղարվեստական արտահայտչական պարզ միջոցները, ինքնատիպ մակդիրներն ու համեմատությունները լիովին ի սպաս են դրված հայրենասիրական մոտիվների մարմնավորմանը: Մի կողմից խարազանվում են կապիտալիստա-

¹³ Նույն տեղում, էջ 185:

կան աշխարհին հատուկ երևույթները, մյուս կողմից՝ րացահայտվում և գեղարվեստորեն հաստատվում է ժողովրդական նշմարիտ մտածողությունը, գյումրեցի նավթագործ բանվորների հայրենասիրական տրամադրությունները, մարդկային առաքինությունները, որոնց Ամերիկա էր բերել առաջին աշխարհամարտը։ Բոլորն էլ Շիրակի դաշտավայրի զավակներ են։ Տասներեք տարի առաջ նրանք հեռացել են իրենց հայրենիքից, սակայն ժամանակը չի ազդել նրանց հոգեբանության, կենցաղավարության վրա և, ինչպես դիպուկ նկատում է հեղինակը, Ամերիկայի տասներեք գարունները շատ քիչ բան են փոխել այն ամենի մեջ, ինչ բերել էին հետները Հայաստանից։

Զուգման վտանգին դիմադրելը և ազգապահպանման ձգտումները արտահայտվել են նաև «նաղաղականի փիերին» ակնարկում։

Առհասարակ հայրենաբաղձության զգացմունքները, ազնիվ տրամադրություններն ու ապրումները Կ. Միքայելյանի ակնարկաշարի առանցքային թեման են։ Այդ թեմայով զրված ակնարկները աչքի են ընկնում նաև ռոմանտիկական շնչով։

«Թզենու ստվերի տակ» ակնարկում հեղինակը սեղմ պատկերում է մի խումբ տարոնցիների ապրելակերպը, նրանց հայրենաբաղձ ապրումները։ Ինչպես հայրենիքում, այստեղ ևս նրանք հողի զավակներ են, փարել են հողին և պահպանել իրենց նահապետական վարքն ու բարքը։ Ակնարկագիրը մասնավորապես ընդգծում է նրանց բուռն հայրենասիրական տրամադրությունները, մարդկային խոր ապրումները։

Այսպիսով, ավելի քան քառասունհինգ տարի առաջ գրված «Մաժեստիկ» ակնարկաշարը այսօր էլ պահպանել է ոչ միայն իր թարմությունն ու գեղարվեստական արժեքը, այլև արդիական և հասարակական որոշակի նշանակությունը։

ХУДОЖЕСТВЕННЫЙ ОЧЕРК В ТВОРЧЕСТВЕ К. МИКАЕЛЯНА

ЛЕНА АКОПЯН

Резюме

В творчестве прозаика, переводчика и общественного деятеля Карена Микаеляна видное место занимает цикл очерков под общим заглавием «Magestic», написанный им под непосредственным впечатлением в период поездки в армянские колонии Америки (1925—1927 гг.).

Замысел очерков определяет характер сюжета. Это своего рода хроника, в которой автор прослеживает незавидную судьбу армян на чужбине. В очерках дается портретная характеристика разных поколений армян-переселенцев в Америке. психология интеллигентов, рабочих, людей разных профессий, раскрывается любовь зарубежных армян к Советской Армении. Весь цикл очерков отличается реалистической конкретностью и насыщенностью социальных проблем, он и поныне сохраняет свое художественное значение.